Ինստիտուտում գործում են Ուսանողական թատրոն–լաբորատորիան, Ստեղծարար տեխնոլոգիաների ուսումնական կենտրոնը, ֆիլմադարանը՝ երկու կինոդահլիճներով, զանազան տաղավարներ, ստուդիաներ, լաբորատորիաներ, որոնք խթանում են ուսանողների ուսումնական ստեղծագործական աշխատանքների իրականացմանը:Ուսանողները ուսումնառության ընթացքում թատերական բեմադրություններ են իրականացնում, տարատեսակ դերեր կերտում, հեղինակային ֆիլմեր նկարահանելում, օպերատորական և այլ մասնագիտական աշխատանքներ կատարում՝ օգտագործելով ինստիտուտի կողմից տրամադրվող տաղավարները և տեխնիկան:



ԵԹԿՊԻ–ն հանդիսանում է ՅՈՒՆԵՍԿՕ–ի խաղարկային արվեստների բարձրագույն կրթության ցանցի անդամ: Ինստիտուտն ակտիվորեն իրականացնում է տարաբնույթ նախագծեր, համագործակցում մի շարք եվրոպական բարձրագույն կրթական հաստատությունների, արվեստի դպրոցների հետ: Ինստիտուտը մշտապես հաստատում է նոր արտաքին կապեր՝ վերապատրաստումներ, վարպետության դասեր են անցկացվում արտերկրյա փորձառու մասնագետների կողմից: Պարբերաբար անցկացվում են գիտաժողովներ, սեմինարներ, կլոր սեղաններ, հանդիպումներ: ԵԹԿՊԻ–ի ուսանողներն անկրկնելի հնարավորություն են ունեցել մասնակցելու Տոնինո Գուերրայի, Կրիստոֆ Զանուսիի, Յոս Ստելինգի և Գարի Բարդինի վարպետության դասերին:



Հանդիսանալով տարածաշրջանի խոշորագույն մշակութային կենտրոններից մեկը, Երևան քաղաքը հայտնի է միջազգային թատերական և կինոփառատոներով: ԵԹԿՊԻ–ի ուսանողները մշտապես ներգրավված են այդ փառատոներում՝ ինչպես կազմակերպման գործընթացին, այնպես էլ՝ մրցութային:

ԵԹԿՊԻ–ի պրոֆեսորադասախոսական կազմը և ինստիտուտի ուսանողները մշտապես մասնակցություն են ցուցաբերում նաև արտասահմանյան մի շարք փառատոների, որոնցում մեծ հաջողություններ են գրանցում:

ԵԹԿՊԻ–ում գործում է Կարիերայի կենտրոն, որը միտված է ինստիտուտի ուսանողների, շրջանավարտների և գործատուի միջև կապի ստեղծմանը, ամրապնդմանն ու զարգացմանը:

Ինստիտուտի կողմից հրատարակվում են «Հանդես» գիտահետազոտական հոդվածների ժողովածուն, «Կինոթատրոն» ուսանողական ամսագիրը:

ԵԹԿՊԻ–ի ռեկտորն է Դավիթ Մուրադյանը՝ հայ գրող, կինոգետ, Հայկական ազգային կինոակադեմիայի նախագահ, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ:



ԵԹԿՊԻ
ԵՐԵՎԱՆԻ
ԹԱՏՐՈՆԻ ԵՎ ԿԻՆՈՅԻ
ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ




Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտը ստեղծագործական բուհ է՝ կինոյի և թատրոնի ուղղվածությամբ միակ բարձրագույն ուսումնական հաստատությունը Հայաստանում: ԵԹԿՊԻ–ի 4 ֆակուլտետներում (Թատրոնի ֆակուլտետ, Կինոյի, հեռուստատեսության և անիմացիայի ֆակուլտետ, Արվեստի պատմության, տեսության և կառավարման ֆակուլտետ, Հեռակա ֆակուլտետ) առկա են տասից ավելի մասնագիտությունների գծով բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ծրագրեր, որոնցում ընդգրկված են մոտ 1000 ուսանող՝ Երևանում և բուհի 3 մասնաճյուղերում՝ Գյումրիում, Վանաձորում և Գորիսում:

Ինստիտուտում դասավանդում են թատրոնի, կինոյի ասպարեզում մեծ նվաճումներ և համբավ ունեցող արվեստագետներ: Ինստիտուտի առանձին կուրսերը ղեկավարում են փորձառու և վաստակաշատ վարպետներ, ինչը ցանկացած կուրսն անկրկնելի է դարձնում: Այստեղ գործում են Սոս Սարգսյանի, Ռուբեն Բաբայանի, Սուրեն Հասմիկյանի, Հենրիկ Հովհաննիսյանի, Դավիթ Մուրադյանի, Հրաչյա Գասպարյանի, Նիկոլայ Ծատուրյանի, Վահե Շահվերդյանի, Նարինե Սարգսյանի, Աննա Երզինկյանի, Արթուր Ղուկասյանի, Վիգեն Չալդրանյանի, Սուրեն Բաբայանի, Ռուբեն Գևորգյանցի, Դավիթ Մինասյանի, Ռուդոլֆ Վաթինյանի, Վրեժ Պետրոսյանի և այլ անվանի արվեստագետների, ոլորտի առաջատարների արվեստանոցները:



ԵԹԿՊԻ–ի կողմից որակյալ կրթություն ապահովելու գլխավոր հիմքերից մեկը պրոֆեսորադասախոսական կազմն է. այստեղ դասավանդում են գիտությունների դոկտորի, գիտությունների թեկնածուի աստիճան ունեցող մասնագետներ, ՀՀ, ՀԽՍՀ ժողովրդական արտիստներ, Արվեստի վաստակավոր գործիչներ, Մշակույթի վաստակավոր գործիչներ, միջազգային մրցույթների դափնեկիրներ և այլ կոչումներ և մրցանակներ ունեցող մանկավարժներ:

**Թատրոնի ֆակուլտետն** իրականացնում է ուսուցում հետևյալ մասնագիտություններով՝ Դերասանական արվեստ, Ռեժիսուրա, Պարարվեստի ռեժիսուրա: Ֆակուլտետի ուսանողներն ունեն իրենց տաղանդը բացահայտելու և ինքնարտահայտվելու հնարավորություն՝ դերակատարումների, բեմադրությունների, նկարահանումների միջոցով: Ցանկացած ուսումնական տարին ապագա արվեստագետների համար նոր համագործակցությունների, բազմակողմանի ծրագրերի իրականացման հնարավորություն է բերում, ինչը նպաստում է նրանց՝ իրական պրոֆեսիոնալներ դառնալուն:

**Կինոյի, Հեռուստատեսության և անիմացիայի ֆակուլտետն** առաջարկում է Կինոարվեստ, Օպերատորություն, Գեղանկարչություն կրթական ծրագրերով ուսուցում: Ուսանողների առջև բացվում են կինոյի և հեռուստատեսության արտասովոր աշխարհը՝ ֆիլմի պատրաստման բոլոր գաղտնիքներով և առանձնահատկություններով: Կինոյի պատմությունը, տեսությունը, շարժվող պատկերի տեխնիկական բոլոր հնարքները, գեղարվեստական, վավերագրական և անիմացիոն ֆիլմերի ստեղծումը, օպերատորական գործը, մոնտաժային և հնչյունային ռեժիսուրան, բեմանկարչությունը և բեմազգեստների ձևավորումը. այս բոլորը հասանելի են դառնում ինստիտուտում դասավանդող հմուտ մասնագետների օգնությամբ:

**Արվեստի պատմության, տեսության և կառավարման ֆակուլտետն** ուսուցում է իրականացնում Թատերագիտություն, Գրական ստեղծագործություն, Սոցիալ–մշակութային գործունեություն (արվեստի կառավարում), Կինոգիտություն մասնագիտություններով:

Բակալավրիատի չորսամյա ուսուցման ընթացքում՝ կրթական առաջին աստիճանում, ուսանողները ստանում են գիտելիքներ և հմտություններ, որոնք բավարար են մասնագիտական աշխատանքներ ծավալելու, գեղարվեստական–ստեղծագործական, կազմակերպական գործունեություն իրականացնելու համար՝ թատրոնի, կինոյի, հեռուստատեսության, այլ արվեստների բնագավառներում: Արվեստի պատմության, տեսության և կառավարման ֆակուլտետին է վստահված ինստիտուտում առկա բոլոր մասնագիտություններով մագիստրոսի կրթական ծրագրի իրականացումը:

2015 թվականից բացվել է նաև **Հեռակա ֆակուլտետը,** որտեղ ուսուցումն իրականացվում է Ռեժիսուրա (դրամատիկական թատրոնի ռեժիսուրա), Պարարվեստի ռեժիսուրա, Կինոարվեստ (հեռուստառեժիսուրա, հնչյունային ռեժիսուրա), Օպերատորություն, Սոցիալ– մշակութային գործունեություն (արվեստի կառավարում) մասագիտությունների գծով:

